ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը հունվարի 2011թ. N 3
Քաղաք Նոր Հաճն

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ԳԱԳԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ Նոր Հաճնի քաղաքային համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Նորհաճնցի ազատամարտիկ Գագիկ Ալբերտի Մարտիրոսյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն ճանաչել կարիքավոր՝ անօթևան ընտանիք, քանի որ ընտանիքը սեփականության իրավունքով պատկանող բնակարան չունի և բնակվում է վարձով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին դիմել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ Գագիկ Ալբերտի Մարտիրոսյանի կարիքավոր ընտանիքը բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու համար:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Կ. Հարությունյան՝			
Կ. Գևորգյան՝			
Գ. Մաթևոսյան՝			
Կ. Ապրեսյան՝			
Ա. Գևորգյան՝			
Կ. Միրզոյան՝			
Գ. Մխիթարյան՝			
Հ. Հովսեփյան՝			

Քաղաքապետ՝ Գ. Մաթևոսյան